Ձև N 1

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

| N/N ը/կ | ԵՐԹՈՒՂՈՒ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը և համարը | սկզբնակետը | վերջնակետը | տեսակը | սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը |
| 1 | գ.Այգուտ - Երևան - գ.Այգուտ N335 | գ.Այգուտ | Երևան, «Հյուսիսային» Ա/Կ | միկրոավտոբուսային | 2 |
| 2 | Երևան - գ.Ուրցաձոր - Երևան N480 | Երևան, «Սևանի փողոց» ե/կ | գ.Ուրցաձոր | միկրոավտոբուսային | 2 |
| 3 | գ.Ծաղկահովիտ - Երևան - գ.Ծաղկահովիտ N496 | գ.Ծաղկահովիտ | Երևան, «Շիրակ» ե/կ | միկրոավտոբուսային | 2 |
| 4 | Երևան - գ.Ոսկեհատ - Երևան N509 | Երևան, «Կիլիկիա» ե/կ | գ.Ոսկեհատ | միկրոավտոբուսային | 2 |
| 5 | Երևան - Նոյեմբերյան - Երևան N663 | Երևան, «Կենտրոնական» Ա/Կ | Նոյեմբերյանի Ա/Կ | միկրոավտոբուսային | 2 |
| 6 | Նոյեմբերյան - Երևան – Նոյեմբերյան N664 | Նոյեմբերյանի Ա/Կ | Երևան, «Կենտրոնական» Ա/Կ | միկրոավտոբուսային | 3 |
| 7 | Սպիտակ - Գյումրի – Սպիտակ N429 | Սպիտակի Ա/Կ | Գյումրու Ա/Կ | ավտոբուսային | 2 |
| 8 | Երևան - Ջրվեժ - գ.Ձորաղբյուրի ամառանոցներ - Երևան N 296 | Երևան,«Աշխատանքի հրապարակ» ե/կ | գ.Ձորաղբյուրի ամառանոցներ | ավտոբուսային | 5 |
| 9 | գ.Աղավնաձոր - Երևան - գ.Աղավնաձոր N562 | գ.Աղավնաձոր | Երևան, «Կենտրոնական» Ա/Կ | միկրոավտոբուսային | 2 |

## ՑԱՆԿ
## ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1.Հայտ.
2.Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3.Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4.Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
5.Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հաստատող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
6.Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7.Ավտոբուսը այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
8.Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
9.Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքում.
10.Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակայանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
11.Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:
Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոսնձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ սոսնձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստում է դրանց իսկությունը:
Մրցույթը տեղի կունենա 2010 թվականի սեպտեմբերի 7-ին Երևանի «Հյուսիսային» ավտոկայարանում ժամը $10^{00}$
Հայտերը ընդունվում են ամեն օր ժամը 10-17-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), Երևան, Սևանի խճուղի 1 հասցեով («Հյուսիսային» Ա/Կ)
Հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 31.08.2010թ. ժամը $13^{00}$:
Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-62-26-51, 010-62-26-01
Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ _______________________________ .
(ստորագրություն)

*Ծանոթություն՝ ՀՀ տարնսպորտի և կապի նախարարության կողմից վերը նշված երթուղիների չվացուցակները կարող են միակողմանի փոփոխման ենթարկվել